ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/11

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հեմոդիալիզի պարագա և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Արմինոլի» ՍՊԸ-ի կողմից 04.03.2021թ. ներկայացված (05.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/11 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Արմինոլի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արմինոլի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 04.03.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար սույն թվականի փետրվարի 11-ին ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով հեմոդիալիզի պարագա և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Մրցույթ): Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել

նաև մեր կազմակերպությունը՝ «Արմինոլի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն): Մրցույթի բացման ժամկետ է սահմանված եղել 18.02.2021թ ժամը 12:00: Հանձնաժողովը փետրվարի 19-ին ծանուցում է, որ «Հաշվի առնելով, որ «Գավառի ԲԿ» ՓԲԸ–ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. N526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն 23.02.2021թ-ին հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարար գնահատված մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա ք. Գավառ Ազատության 21 հասցեում «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ից մինչը 13:00»: Կազմակերպության ներկայացուցիչը պատշաճ կերպով նշված ժամանակում ներկայացել է գների նվազեցման շուրջ բանակցությունների:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանում է, որ «հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ: Յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը

կարող է վերանայել իր գնային առաջարկը, բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները: Բանակցությունների ողջ ընթացքում բանակցությունները վարվել են վերոգրյալ օրենսդրական կետերին համապատասխան, որի մասին են վկայում նաև կազմակերպության կողմից պարբերաբար ուղարկված նամակները, որում նշված են մասնակիցների գները:

Մինչ բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտը Մեր Կազմակերպության կողմից 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար հնչեցվել է նվազագույն գնային առաջարկ համապատասխանաբար 2320000 և 3240000: Բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտից հետո, մասնավորապես՝ 13:03-ից հետո, «Թեո Ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հնչեցվել է նոր նվազեցված գնային առաջարկ: Այստեղ ուշագրավ է այն փաստը, որ Մեր Կազմակերպության կողմից հնչեցված գների վերաբերյալ էլեկտրոնային ծանուցումից հետո մինչ այժմ գնահատող հանձնաժողովի կողմից այդպես էլ չի ստացվել նամակ, որը կվկայեր, որ Մեր կազմակերպության կողմից հնչեցված առաջարկից հետո եղել է նոր առաջարկ:

Վերոգրյալից հետո Պատվիրատուի կողմից կազմվում է արձանագրություն, որը մեր ներակայացուցիչը ստորագրում է՝ տակը նշելով իր առարկությունները: Այն հրապարակված է գնումների պաշտոնական տեղեկագրում https://gnumner.am/website/images/original/cbdfa22f.pdf հղմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2021 թվականի մարտի 1-ի N6գ արձանագրությամբ «Թեո Ֆարմա» ՍՊԸ-ին 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչելու որոշումը և հաղթող ճանաչել Մեր Կազմակերպությանը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.03.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. **<u>«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>**

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար սույն թվականի փետրվարի 11-ին ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով հեմոդիալիզի պարագա և նյութերի ձեռք բերման նպատակով կազմակերպվել է գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Մրցույթ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա: Մրցույթի բացման ժամկետ է սահմանվել 18.02.2021թ ժամը 12:00: Ընթացակարգին մասնակցելու հայտ են ներկայացրել 6 մասնակից՝ «Նատալի ֆարմ» ՍՊԸ, «Խաչպար» ՍՊԸ, «Թեոֆարմա» ՍՊԸ, «ԱՐՄԻՆՈԼԻ» ՍՊԸ, «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ, «ՄՈՒԼՏԻ ՄԵ» ՍՊԸ: Համաձայն փետրվարի 18-ին կազմված 6ա արձանագրության/, որը տեղեկագրում հրապարակվել է 19.02.2021թ, մասնակիցներին ծանուցվել է բանակցության վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. N526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն 23.02.2021թ-ին հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարար գնահատված մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա ք. Գավառ Ազատության 21 հասցեում «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ից մինչը 13:00:

Մասնակիցներից «Թեոֆարմա» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Մակինյանը, «Արմինոլի» և «Իմպեքս» ՍՊԸ ների կողմից լիազորված ներկայացուցիչ Աշոտ Սահակյանը (նույնականացման քարտ 012148151 տրված 07.08.2020թ-ին 001-ի կողմից) պատշաճ կերպով նշված ժամանակում ներկայացել են գների նվազեցման շուրջ բանակցությունների:

ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:Ապրանքների գնման

դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ

ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին: Յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

Այսպիսով բանակցությունները տեղի էին ունենում 3 ընկերությունների մասնակցությամբ, նոր գնային առաջարկներ մասնակիցները ներկայացրել են սահմանված ժամանակահատվածում: Ժամկետի լրանալուց հետո չի ընդունվել ոչ մի գնային առաջարկ և ավարտից հետո կազմվել է 6բ արձանագրություն, որը ստորագրվել է հանձնաժողովի անդամների, նախագահի և մասնակիցների կողմից:

«Արմինոլի» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած այն փաստը, որ իրենց կազմակերպության կողմից հնչեցված գների վերաբերյալ էլ ծանուցումից հետո գնահատող հանձնաժողովի կողմից այդպես էլ չի ստացվել նամակ, նախ նշենք, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից վերջին նվազեցում եղել է սահմանված ժամկետի ավարտի պահին, որի պատճառով «Արմինոլի» ՍՊԸ-ն էլ չի հասցնում նվազեցում կատարել, թղթային տարբերակով նոր գնային առաջարկ «Արմինոլի» ՍՊԸ-ն ներկայացրել է 25.02.2021թ, հիմնական բանակցությունը տեղի էր ունենում 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար:

Ուստի համաձայն ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով մրցույթի 01.03.3021թ N6գ արձանագրության 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար հաղթող մասնակից է համարվում

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.03.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3.ԳԲՔԱ-ՆԳ-2021/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հեմոդիալիզի պարագա և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել՝ «Նատալի ֆարմ» ՍՊ, «Խաչպար» ՍՊ, «Թեոֆարմա» ՍՊ, «Իմպեքս» ՍՊ, «Արմինոլի» ՍՊ, «ՄՈՒԼՏԻ ՄԵԴ» ՍՊ ընկերությունները:
2. «Արմինոլի» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել Ընթացակարգի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.02.2021թ. նիստի թիվ 6ա արձանագրությամբ արձանագրվել է, որ հաշվի առնելով, որ «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 23.02.2021թ. հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարար գնահատված մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա ք.Գավառ Ազատության 21 հասցեում, «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ից մինչև 13:00-ն:
4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիտի թիվ 6բ արձանագրությամբ արձանագրվել է, որ սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են նոր գնային առաջարկներ.

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն 1-րդ, 2-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ, «Արմինոլի» ՍՊԸ-ն 7-րդ և 8-րդ, իսկ «Իմպեքս» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժինների համար:

Սակայն 13:00 «Թեոֆարմա» ՍՊԸ-ն 7-րդ չափաբաժնի համար ներկայացրել է 2 100 000, 8-րդ չափաբաժնի համար՝ 3 000 000: Իջեցված գնի համար մյուս ներկայացուցիչը չառարկեց:

5. Վերը նշված արձանագրությունը գնահատող հանձնաժողովի անդամներից և քարտուղարից բացի ստորագրվել է նաև «Թեոֆարմա» ՍՊ, «Իմպեքս» ՍՊ, ինչպես նաև «Արմինոլի» ՍՊ ընկերությունների կողմից: Արձանագրության մեջ ձեռագիր նշվել է «Արմինոլի» ՍՊԸ-ի լիազորված անձի առարկությունը հետևյալ բովանդակությամբ. «Հաշվի առնելով, որ արձանագրության մեջ նշված 7-րդ և 8-րդ լոտերի գները ներկայացվել են ժամը 13:03-ից հետո, համաձայն չենք արձանագրության հետ և բողոքարկելու ենք»:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիտի թիվ 6գ արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Թեոֆարմա» ՍՊԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԱՐՄԻՆՈԼի» ՍՊԸ-ի 04.03.2021թ. ներկայացված բողոքը, ԳԲՔԱ-ՆԳ-2021/11 բողոքի շրջանակներում «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***<u>իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.</u>***

<u>ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,</u>

<u>բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ</u>, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. ***յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,***

ե. ***բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:***

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից…:

Այսպես՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հեմոդիալիզի պարագա և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել՝ «Նատալի ֆարմ» ՍՊ, «Խաչպար» ՍՊ, «Թեոֆարմա» ՍՊ, «Իմպեքս» ՍՊ, «Արմինոլի» ՍՊ, «ՄՈՒԼՏԻ ՄԵԴ» ՍՊ ընկերությունները:

«Արմինոլի» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել Ընթացակարգի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.02.2021թ. նիստի թիվ 6ա արձանագրությամբ արձանագրվել է, որ հաշվի առնելով, որ «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 23.02.2021թ. հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարար գնահատված մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա ք.Գավառ Ազատության 21 հասցեում, «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ից մինչև 13:00-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիտի թիվ 6բ արձանագրությամբ արձանագրվել է, որ սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են նոր գնային առաջարկներ.

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն 1-րդ, 2-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ, «Արմինոլի» ՍՊԸ-ն 7-րդ և 8-րդ, իսկ «Իմպեքս» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժինների համար:

Սակայն 13:00 «Թեոֆարմա» ՍՊԸ-ն 7-րդ չափաբաժնի համար ներկայացրել է 2 100 000, 8-րդ չափաբաժնի համար՝ 3 000 000: Իջեցված գնի համար մյուս ներկայացուցիչը չառարկեց:

Վերը նշված արձանագրությունը գնահատող հանձնաժողովի անդամներից և քարտուղարից բացի ստորագրվել է նաև «Թեոֆարմա» ՍՊ, «Իմպեքս» ՍՊ, ինչպես նաև «Արմինոլի» ՍՊ ընկերությունների կողմից: Արձանագրության մեջ ձեռագիր նշվել է «Արմինոլի» ՍՊԸ-ի լիազորված անձի առարկությունը հետևյալ բովանդակությամբ. «Հաշվի առնելով, որ արձանագրության մեջ նշված 7-րդ և 8-րդ լոտերի գները ներկայացվել են ժամը 13:03-ից հետո, համաձայն չենք արձանագրության հետ և բողոքարկելու ենք»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիտի թիվ 6գ արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Թեոֆարմա» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Արմինոլի» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Մինչ բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտը Մեր Կազմակերպության կողմից 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար հնչեցվել է նվազագույն գնային առաջարկ համապատասխանաբար 2320000 և 3240000:

Բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտից հետո, մասնավորապես՝ 13:03-ից հետո, «Թեոֆարմա» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հնչեցվել է նոր նվազեցված գնային առաջարկ: Այստեղ ուշագրավ է այն փաստը, որ Մեր Կազմակերպության կողմից հնչեցված գների վերաբերյալ էլեկտրոնային ծանուցումից հետո մինչ այժմ գնահատող հանձնաժողովի կողմից այդպես էլ չի ստացվել նամակ, որը կվկայեր, որ Մեր կազմակերպության կողմից հնչեցված առաջարկից հետո եղել է նոր առաջարկ»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2021/11 բողոքի շրջանակներում Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««Արմինոլի» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած այն փաստը, որ իրենց կազմակերպության կողմից հնչեցված գների վերաբերյալ էլ. ծանուցումից հետո գնահատող հանձնաժողովի կողմից այդպես էլ չի ստացվել նամակ, նշենք, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից վերջին նվազեցում եղել է սահմանված ժամկետի ավարտի պահին, որի պատճառով «Արմինոլի» ՍՊԸ-ն էլ չի հասցնում նվազեցում կատարել: Թղթային տարբերակով նոր գնային առաջարկ «Արմինոլի» ՍՊԸ-ն ներկայացրել է 25.02.2021թ, հիմնական բանակցությունը տեղի էր ունենում 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար:

Ուստի, համաձայն ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով մրցույթի 01.03.3021թ N6գ արձանագրության 7-րդ և 8-րդ չափաբաժինների՝ հաղթող մասնակից է համարվում «Թեոֆարմա» ՍՊԸ-ն»:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ Պատվիրատուի կողմից բողոքի առարկա հանդիսացող Ընթացակարգի 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով միաժամանակյա բանակցություններ վարելու գործընթացի իրավաչափությունն ուսումնասիրելու նպատակով, հիմք ընդունելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետը, 16.03.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/3744-2020 գրությամբ դիմել է «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ խնդրելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող ԳԲՔԱ-ՆԳ-2021/11 ծածկագրով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ տրամադրել «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիստի N 6բ

արձանագրության համաձայն կազմակերպված միաժամանակյա բանակցությունների տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 17.03.2021թ. թիվ 07-116 գրությամբ հայտնել է, որ Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիստի N 6բ արձանագրության համաձայն կազմակերպված միաժամանակյա բանակցությունները չեն տեսաձայնագրվել կամ ձայնագրվել:

Մինչդեռ՝ կարգի 26-րդ կետի կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են***, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Այսպիսով՝ արձանագրում եմ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված իմպերատիվ պահանջը, այն է՝ չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի տեսաձայնագրության կամ ձայնագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ հաստատել կամ հերքել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիստի N 6բ արձանագրության համաձայն կազմակերպված միաժամանակյա բանակցությունների վարման, ինչպես նաև, որպես հետևանք «Թեոֆարմա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշման իրավաչափությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ պետք է դադարեցնել 23.02.2021թ. ժամը 11:00-ին կայացած միաժամանակյա բանակցությունները և բանակցությունների արդյունքներով գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 6գ արձանագրությամբ «ԹեոՖարմա» ՍՊԸ-ին ընթացակարգի 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչելու մասին որոշումը և գների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա նոր բանակցություններ՝ պահպանելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերության կողմից բողոքով ներկայացված երկրորդ պահանջը, այն է՝ *«Արմինոլի» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից*, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արմինոլի» ՍՊԸ-ի կողմից 04.03.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում գնահատող հանձնաժողովի 2021 թվականի մարտի 1-ի թիվ 6գ արձանագրությամբ «Թեոֆարմա» ՍՊԸ-ին Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Բողոքի պահանջը՝ «Արմինոլի» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**